

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԶԱՒԱԿԸ

Հ. Քերովքէ Վ. Քուշներեանի (1841-1891) անուանը յաճախ կարելի է հանդիպել 1870-1900-ական թուականների «Բազմավէպի» էջերում. գրականագիտական, պատմագիտական, մանկավարժական բնոյթի յօդուածներ, ինքնուրոյն ստեղծագործութիւններ (յատկապէս առակներ), թարգմանութիւններ, Դաւթի սաղմոսների հրաշալի մեկնութիւններ: Ուսումնասիրութեան ընթացքում աստիճանաբար ձեւաւորում է մշակոյթի իսկական նուիրեալի, իր ժողովրդին, գրականութեանը, կրթութեան ու լուսաւորութեան գործին զինուորագորուած հայ մտաւորականի անզուգական մի կերպար:

Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարեան միաբանութիւնում անցկացրած եօթը տարիներն ի զուր չէին անցել նրա կեանքում. Հոգեւոր կրթութեան հետ միասին Մխիթարեան վարժարանի հարուստ գրադարանը հնարաւորութիւն էր տուել նրան ծանօթանալու հայ եւ համաշխարհային գրականութեանն ու արուեստին, տիրապետելու եւրոպական մի քանի լեզուների, խորացնելու գիտելիքները հայ ժողովրդի պատմութեան, լեզուաբանութեան եւ մանկավարժութեան բնագաւառներում: Հեւոնդ Ալիշանի հետ կապը նա երբեք չխզեց, նոյնիսկ հայրենիք՝ Ղրիմի Խաղասուպազար քաղաք վերադառնալուց եւ հոգեւորականի իր կոչմանը ծառայելու ընթացքում շարունակուեց ուսուցչի եւ աշակերտի, իսկ յետոյ նաեւ երկու հոգեհարազատ մարդկանց ջերմ բարեկամութիւնը, հայրենի մշակոյթին, գրականութեանը ծառայող երկու կամու Մխիթարեանների ստեղծագործական համագործակցութիւնը:

Հ. Քերովքէ Վ. Քուշներեանի գրական գործունէութեան չուսումնասիրուած էջերից են նրա թարգմանութիւնները (գրաբար եւ արեւմտահայերէն) ուուս դասական պոեզիայից, ուուս նշանաւոր գրողների մասին գրականագիտական յօդուածները, ակնարկներն ու ոչ մեծ գրախօսութիւնները, որոնք կարդում էր ե՛ւ արեւմտահայութիւնը, ե՛ւ արեւելահայութիւնը: Մշակութա-

յին երկու ճիւղերի սահմանագծում կանգնած մտաւորականն իր կրթութեամբ աւելի շատ կապուած էր արեւմտահայ, իսկ ծնունդով, հոգեւոր եւ աշխարհիկ գործունէութեամբ՝ արեւելահայ մտաւորականութեան հետ։ Նա իրաւացիօրէն գտնում էր, որ դրողի ստեղծագործութիւնը նրա գաղափարների, վարքի ու բարքի, հայեացքների լաւագոյն հայելին է։ «Որ եւ իցէ գրուածք մարդ կարդալու միջոց՝ բնական հետաքրքրութիւն մը կը զգայ՝ հեղինակին կամ գրողին վարքը եւ բարքը գիտնալու, դրում է նա «Առակախոսներուն վրայ» իր յօդուածում, թէպէտ նոյն իսկ գրուածքը կամ հեղինակութիւնը՝ յայտնի եւ լաւագոյն հայելի են գրողին վարուց եւ բարուց, զի նոցա խելքին չափը եւ սրտին զգացմունքը անդ տպուած կը տեսնուի, մանաւանդ, երբ գիրքը բարոյական եւ իմաստասիրական նիւթերու վրայ լինի»¹։ Այդպիսի ուղղուածութիւն ունեն Գուշներեանի եւ՝ ինքնուրոյն եւ՝ թարգմանական ստեղծագործութիւնները։

Ռուսերէնի, ուուս գրականութեան եւ յատկապէս պոեզիայի հրաշալի իմացութիւնը, ինչպէս նաև թարգմանական գրականութեան հսկայական դերի արժէքաւորումը ազգային գրականութեան զարգացման, հարստացման գործում, կարծում ենք, իրենց որոշակի դերն ունեցան «Բազմավէպի» էջերում ծաւալած նրա թարգմանական գործունէութեան վրայ։

1858թ. աւարտելով հայունի քաղաքի հայ կաթոլիկական վարժարանը՝ նա մեկնում է Վենետիկ, ինչպէս Մ. Թիմինձեանն է գրում նրա մասին կենսագրականում, «Ճնողաց սուրբ ուխտը կատարելու»։ Թարգմանութիւններով զբաղուել է եւ՝ Մխիթարեան վարժարանում ուսումնառութեան տարիներին եւ՝ դրանից յետոյ, երբ քահանայ ճեռնադրուելով վերադառնում է իր ծննդավայրը՝ մանկավարժական գործունէութիւնը համատեղելով գրական-թարգմանական աշխատանքի հետ։ «Կ'աշխատի օգտակար թարգմանութիւններ եւ ինքնագիր գրութիւններ յօրինել։ մասնաւորապէս միշտ ի նկատի ունենալով իրեն յանձնուած աշակերտաց կրթութիւնը»,՝ գրում է Մ. Թիմինձեանը²։

¹ ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԻ Վ., Առակֆ (ծաղկաբաղ եւ ինքնագիր), ՎԵՆԵՏԻԿ, Մ. Ղազար, 1904, էջ 30։

² ՏԵ՛ՄԻՄԻՆՃԵԱՆ Մ. Ռ., Հայր Քերովիք Քուշներեան. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԻ Վ., «Առակֆ ծաղկաբաղ եւ ինքնագիր» գրքից, ՎԵՆԵՏԻԿ, ի Սուրբ Ղազար, 1904, էջ 11-25։

Հարկ է նշել նաեւ, որ Հ. Ք. Վ. Քուչներեանի թարգմանութիւնների ընտրութիւնն անդամ՝ եւ՝ թեմատիկ եւ՝ բովանդակային առումով համապատասխանում էր նրա հոգեւոր կերտուածքին. գաղափարական այն խնդիրներին, որոնք կարեւոր էր համարում հայ մարդու կրթութեան եւ զարգացման համար. Կոիլովի առակների, Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Միխայլովի, Բորաւիկովսկու, Եախոնտովի բանաստեղծութիւնների, ոռուսական ժողովրդական երգերի թարգմանութիւնները վկայում են նրա գրական ճաշակի եւ թարգմանական վարպետութեան մասին³: Հետագայում էլ՝ եւ՝ 1871թ., երբ տեղափոխուեց Թէոդոսիա եւ ստանձնեց հայ կաթոլիկների ժողովրդապետի պաշտօնը, եւ՝ 1877-78թ.թ.՝ ոռուս-տաճկական պատերազմի տարիներին, երբ «Կարմիր խաչի» անդամ էր եւ օգնում էր վիրաւոր ոռուս զինուորներին եւ հայ փախստականներին, նա շարունակում էր աշխատակցել «Բազմավիշպին». «Հ. Քերովը՝ Վենետիկեան ազգօգուտ «Բազմավիշպ» համբիսարանին հզօր աջակիցներէն մին եղած է, եւ որոյ համար քան տարի անդադար աշխատած է», -կարդում ենք նրա մասին կենսագրականում: Յիրաւի, բաւական է բացել ամսագրի այդ տարիների հատորները, որոնց մէջ չիննեն նրա զրուածքները՝ «իւր անուշ եւ կանոնաւոր, կենդանի եւ սահուն լեզուով»⁴: Բազմազան էին նրա զրական հետաքրքրութիւնները ինքնագիր եւ թարգմանական առակներից, որն ի դէպ իր սիրելի զբաղմունքն էր, մինչեւ պատմական երկասիրութիւնները («Ուրուագիծ պատմական թէոդոսիա-Կաֆա քաղաքին Տաւրիոյ եւ ազգիս գաղթականութեան», «Հայկական արձանագրութիւնք Ղրիմու», հրաշալի կենսագրականներ ծովանկարիչ Յ. Արվազովսկու, ծովակալ Սերեբրյակովի, երաժիշտ Անդրէսա Քաղցածեանի, դերասան Պետրոս Աղամեանի, ինչպէս նաեւ յօդուածներ ու գրախօսութիւններ ոռուս գրողների ու բանաստեղծների մասին (ի. Կոիլով, Ա. Նեկրասով, ի. Տուրգենև, Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով եւ այլն):

Կարծում ենք գրական-պատմական, ինչպէս նաեւ թարգմանութեան տեսակտից, հետաքրքիր կը լինի ծանօթանալ Հ. Ք. Քուչներեանի գրաբար եւ արեւմտահայերէն (աշխարհաբար) թարգ-

³ Բացի ոռուսական պոեզիայի թարգմանութիւններից Ք. Քուչներեանը թարգմանել է նաեւ Տ. Շելչենկոյ, Ա. Միցկեւիչ, Լաֆոնտէն, Ռ. Բարբիեր, Լաշմբոդի եւ այլն:

⁴ ԹիՄԻՆՃԵԱՆ Մ. Ռ., նոյն տեղում:

մանութիւններին, որոնք հայուսական գրական առնչութիւնների, ինչպէս նաև հայերէն թարգմանութիւնների պատմութեան հետաքրքիր բացայայտումների, տեսական ու գործնական վերլուծութիւնների հնարաւորութիւն կը տան:

Ուսւ դասական գրողներին նույիրուած կենսագրականներում, յօդուած-ուսումնասիրութիւններում, գրախօսականներում, ինչպէս նաև ակնարկային բնոյթի վերլուծութիւններում Քուշներեանը գրողին մշտապէս ներկայացնում է իր ժամանակի մէջ, նրանց ստեղծագործութիւններում բարձրացուող հարցագրումներին անդրադառնում՝ կապելով դրանք դարի հասարակական-քաղաքական, սոցիալական ու գեղագիտական խնդիրների ու պահանջների հետ, միաժամանակ կարեւոր ու անհրաժեշտ համարելով դրանց թարգմանութիւնն ազգային գրականութեան զարգացման գործում: Այսպէս, 1876թ., երրորդում էր Ա. Պուշկինի մահուան 40-ամեակը, երբ Ռուսաստանում իսկ նորովի էր ներկայացւում ու արժէքաւորում Պուշկինի դերը ուսւ գրականութեան զարգացման գործում, «Բազմավիճակ» եւս արձագանքում է այդ յոբեկեանին՝ «Հանդէս կենսագրական» բաժնում տպագրելով «Աղեքսանդր Բուշփին» վերնագրով յօդուածը եւ “Երջակ և Յաջու յլասպ աշմայք...” բանստեղծութիւնը իր թարգմանութեամբ, որն ի դէպ վերնագրել էր «Յիշատակ մահու»⁵: Արժէքաւորելով Պուշկինի դերը ուսւ գրականութեան մէջ, Քուշներեանը գրում է. «Անաշառ քննիչք կը դասեն զիուշքին Ռուսիոյ բանաստեղծներուն առաջին կարգը. ունի ծննդական միտք, աշխոյժ երեւակայութիւն, ընտիր լեզու, վսեմը պարզութեամբ խառնուած...»: Ուշագրաւ է նաև այն, որ Քուշներեանը թուարկելով Պուշկինի մի շարք յաջողուած ստեղծագործութիւնները՝ «Եւդէնի Օնեգին», «Ռուսան եւ Լիւդմիլա», «Գնչուներ» («Բուշպայք»), յատկապէս բարձր է գնահատում նրա «Բորիս Գոդունով» թատերգութիւնը, որը «Ռուս բատերգաց մէջ առաջին տեղն ունի», պատմութեան մէջ անհատի եւ ժողովրդի դերի գնահատման, կենտրոնաձիգ պետութիւն ունենալու, պետականութեան պահպանման առումով:

Որպէսպի պատկերացում տայ ընթերցողին Պուշկինի պոեզիայի մասին նա ոչ միայն իր թարգմանութեամբ առաջին անդամ ներկայացնում է Պուշկինի վերոյիշեալ բանաստեղծութիւնը,

⁵

Տե՛ս «Բազմավիճակ», 1876, N 1-12, էջ 248-250.

այլեւ հարկ է համարում անդրադառնալ թարգմանութեան խնդրին եւ լաւ թարգմանութեան իր պատկերացրած չափանիշներին. «Հեղինակիս պարզ եւ իմաստալից հանճարոյն նաշակ մը տալու համար հետագայ ուտանաւորն ըստ կարելոյն նիշտ թարգմանութեամբ կ'ընծայենք ընթերցողաց»: Ի դէպ Քուշներեանը վերնագրել է բանաստեղծութիւնը՝ ելնելով, հաւանաբար, ոտանաւորի խոհական-փիլիսոփայական բովանդակութիւնից՝ «Յիշատակ մահու»: Վելսագրեր դնելու այս ձեւը յաճախ են կիրառել հայ թարգմանիչները (Նոյն բանաստեղծութիւնը թարգմանիչ Յովհաննէս Պալեանը վերնագրել է «Խոհեր», իսկ Պուշկինի «Օտպա ուստասիսակ և յշեն հեռօրոշնե...» տողով սկսուող բանաստեղծութիւնը՝ «Աղօթք» եւ այլն): 1886-ին Քուշներեանի թարգմանութեամբ տպագրուում են Պուշկինի «Թուչնիկ», «Բոշայք», 1889-ին՝ «Յարասութիւն ի Հայր մեր» («Օտպե հաա»)⁶ բանաստեղծութիւնները: Միաժամանակ նրա թարգմանութեամբ 1883թ. «Բազմավիշպի» «Հանողէս հայկական» բաժնում առաջին անգամ հատուածաբար լոյս է տեսնում Պուշկինի «Ճանապարհորդութիւն Յէրզիուում»⁸ ստեղծագործութիւնը, որը հայ ընթերցողին ծանօթացնում է ոռւս մեծ բանաստեղծի տպաւորութիւններին՝ Հայաստանի, հայերի, հայուուսական յարաբերութիւնների, բնութեան, կենցաղի եւ սովորոյթների մասին:

Իւրայատուկ վերաբերմունք ունէր Քուշներեանն իր ժամանակակի Ն. Նեկրասովի անհատականութեան եւ նրա բանաստեղծական ժառանգութեան վերաբերեալ, որի կեանքն ու ստեղծագործութիւնը մանրամասնօրէն ներկայացնում է 1878թ. «Բազմավիշպում» տպագրուած իր յօդուածում՝ առանձնայատուկ ուշադրութիւն դարձնելով բանաստեղծի պոեզիայի յատկապէս թեմատիկ եւ գաղափարական ուղղուածութեանը՝ պոետի կոչումը տեսնելով ժողովրդի պատմութեան, սոցիալական վիճակի եւ ապագայի մասին ճշմարտացի պատկերման մէջ: Նրա ուշադրութիւնից չեն վրիպում նաեւ Սեւաստոպոլեան կամ «առաջին արեւելեան» պատերազմը, գերիների ազատութեան հարցը, անյաջող ճակատամարտը եւ դրա պատճառները: Բարձր է գնահատում Քուշներեանը ժողովրդի սոցիալական ծանր վիճակի պատ-

⁶ Տե՛ս նոյն տեղում, էջ 249.

⁷ Տե՛ս «Բազմավիշպի», 1889, էջ 47.

⁸ Տե՛ս «Բազմավիշպի», 1886, պրակ. Ա, էջ 4-22:

կերումը. «Նեքրասովը իր հանճարը եւ գրիչը նուիրեց ժողովրդական նկուն եւ հարստահարեալ մասին, պաշտպանելով զնոսա եւ ողբալով եւ յանդիմանելով զհարստահարիչս», - գրում է նա⁹: Շարունակելով իր միտքը նա նշում է. «Նեքրասով առաջինն եղաւ որ համարձակօրէն կրցաւ բացատրել գրով՝ այն ալ ոտանաւոր չափմամբ, հասարակաց զգացումը, եւ այն մտատանջ ձկտումները որ զագգը կը խլրտէին, ողորկ եւ ոգելից տողերու տակ ամփոփեց»:

Հ. Ք. Քուչներեանը անդրադառնում է ոչ միայն Նեկրասովի բանաստեղծութիւններում առկայ նոր գաղափարներին, այլեւ նոր լեզուին ու ոճին: Նրա պոեզիան համեմատելով հրաբխից դուրս ժայթքող լաւայի հետ, Քուչներեանը արեւմտահայ ընթերցողին ծանօթացնում է Նեկրասովի բանաստեղծական աշխարհին. «... իրաւ նա Տանդէի նման յերկինս չի վերանար եւ ի սանդարս չիշներ, եւ մտացածին պատիմներ չի հանճարեր՝ զանօրենութիւնս խայտառակելու եւ պատժելու համար, այլ գեղերու, տնակեներու մէջ կը բանայ նա դժոխքը...»¹⁰:

Վերլուծելով Նեկրասովի պոեզիան՝ նա ընդգծում է այն կարեւոր խնդիրները, որոնք իր առջեւ դրել էր ոռւս մեծ բանաստեղծն ու քաղաքացին. «Նեքրասովի ոտանաւորներուն գրեթէ մեծագոյն մասին նպատակն է իր խեղճ եւ նկուն ազգը, Ռուսաց մուժիկը քաղաքանացնել, կրթել, լուսաւորել, հանցցնել, որ նա ալ, իր վրայ իշխողաց հաւասար արարած մ'է. անոր համար ամինայ կը պախարակէ եւ կ'ողբայ նորա պակասութիւնները...»: Հրաշալի է ներկայացնում Քուչներեանը Նեկրասովի մօրը նուիրուած բանաստեղծութիւնը, հաւանաբար, աղերսներ տեսնելով նաեւ իր մօր անմիխթար կորստի միջեւ. «Առ մայրն գրած ոտանաւորը իր վերջին եւ ընտրելագոյն գըրածներէն է,- գրում է նա,- յորում փափկութեան հետ ի միասին դառնութիւնն, վիշտք եւ տագնապք, մի քանի զմի եկեւել կ'ընեն»:

Միաժամանակ, անդրադառնալով յօդուածում բանաստեղծի կոչմանն ու գործին, հաւատացած է, որ մեծ ու իսկական բանաստեղծի գործը ոչ միայն չի կորչելու, այլեւ նրա բացած ա-

⁹ Տե՛ս «ԳՈՒՇՆԵՐԵԱՆ Հ. Ք., Նեքրասով ազգային բանաստեղծն Ռուսաց, «Բազմավայ», 1878, հ. Լ.2, Ն 1-12, էջ 169-179,

¹⁰ Նոյն տեղում:

կոսների մէջ ժողովուրդը պէտք է սերմեր դնի («Առ Սերմնաւ-Հանս»):

Հաւատարիմ մնալով հայ ընթերցողին ռուս պոետներին ներկայացնելու իր սկզբունքին, նա ոչ միայն իր թարգմանութեամբ ներկայացնում է Նեկրասովի վերջին բանաստեղծութիւններից մէկը՝ «Սկիզբն վերջին երգոց» (1876-77), այլեւ յոյայտնում Նեկրասովի պոեզիան հայերէն ճիշտ թարգմանելու եւ հայերէն հնչեցնելու մասին. «Բանաստեղծիս վերջին գրուածոց նաշակ մը տանե մեր ազգին, ըստ կարելոյն ճիշտ թարգմանութեամբ, հաւատենով, որ ազգային նարտարագոյն գրիչ մը, թէ ոչ բոլոր՝ գոնեւ ընտրանաւ թարգմանելով՝ մեր հայերէն վսեմ եւ նոխ լեզուով ներկասովի ոգելից տաղերը, հարստացներ հայկական մատենագրութիւնը»:

«Բազմավիպի» 1877-78թթ. ժողովածուի մէջ տպագրուած է եւս մի յօդուած՝ «Իւան Թուրկենեւ» վերնագրով, որն անստորագիր է, սակայն մեր խորին համզգմամբ այս նիւթը եւս պատկանում է Ք. Վ. Քուչներեանի գրչին՝ եւ՝ յօդուածը կատուցելու ձեւով, եւ՝ ոճական առումով, եւ՝, ի հարկէ, այս հարցադրուածերով, որոնց սովորաբար անդրադառնում է նա: Ըստ էութեան Քուչներեանը դարձեալ գրում էր իր ժամանակակցի, այն խնդիրների մասին, որոնք արդիական էին նաեւ հայ իրականութեան համար: «Արեւմտականների» եւ «սլաւոնոֆիլների» գաղափարական պայքարը համահունչ էր նաեւ հայ «պահպանողական» եւ «առաջադիմական» հոսանքների պայքարին, հայրերի եւ որդիների յաւերժական հակասութեանը: Բարձր գնահատելով «Հարք եւ որդիթե» վիպը, Քուչներեանը նշում է, որ առանց դաստիարակութեան, ազատասիրական գաղափարների, կրթութեան եւ լուսաւորութեան ոչ միայն ազգը, այլեւ առանձին անհատը չի կարող առաջ գնալ, առանց ժողովրդի եւ սեփական պատմութեան խնդիրներին անդրադառնալու գրողն իր կոչմանը չի կարող ծառայել: Ռուս ժողովրդի կեանքն ինչպէս որ է յատկապէս պատկերուած է, ինչպէս նշում է յօդուածագիրը, Տուրգենեւի «Որսորդի մը Յիշատակարանք» ստեղծագործութեան մէջ:

Կարծում ենք, ուշադրութեան արժանի է նաեւ Տուրգենեւի ստեղծագործութիւնները որպէս ռուս գրականութեան զարգացման նոր ու կարեւոր փուլ դիտելը, միաժամանակ հիմք ընդունելով Գոգովի «նատուրալ» դպրոցի դերը քննադատական ոչալիզմի զարգացման գործում. «... այս նորեկներն... կենացմէ

դուրս բան չերեւակայեցին. անոնց երեւակայութիւնն հանգչեցաւ նշմարտութեան վրայ. որով աւելի ոյժ առաւ եւ միանգամայն ոչինչ նուազ շնորհե ստացաւ»¹¹:

Հ. Ք. Քուշներեանի գրական հետաքրքրութիւնների մի իւրայատուկ մաս են կազմում նրա ինքնագիր եւ թարգմանական առակները, լայն հետաքրքրութիւնը առակագրութեան, նրա պատմական, զարգացման, նշանաւոր առակագիրների՝ Եղովառու, Պետրոս, Լաֆոնտէն, Կոլլով, մասին։ իր «Առակախօսներուն վրայ» յօդուածում, որը նաեւ առակների «Բ» հատորի առաջաբանն է, խօսելով նրանց մասին, Քուշներեանը մանրամասն անդրադառնում է ի. Կոլլովի առակներին՝ կենսագրական հանգամանալից տեղեկութիւններ տալով ոռու առակագրի կեանքի եւ ստեղծագործութեան մասին։ «Թէպէտ Քոլլով առաջնորդ առած է իրեն փուանկ առակախօսը, այլ չէ շատացած միայն նորա առակները թարգմանելով, շատեր յիմքնենէ հանճարած է, եւ ըստ պատշաճին եւ տեղույն՝ ազգին պակասութիւնքը ուղղելու համար ձայնը բարձրացնեած է...»¹²։ Առակների իր երկու ժողովածուներում նա, ինչպէս վերը նշեցինք, ներկայացնում է ինչպէս իր, այնպէս էլ միւս առակագիրներից կատարած թարգմանութիւնները (IV հատորը նա չհասցընց տպագրել) գրաբար եւ աշխարհաբար լեզուներով՝ եւ՝ արեւմտահայերէն, եւ՝ արեւելահայերէն։ «Համոզուած եմ,- գրում է նա,- որ առանց գրաբառի աշխարհիկ լեզուն չէ կարելի ուսումնասիրել եւ թէ մեր նախնեաց վսեմ լեզուն՝ միշտ ուսումնասիրելու առարկայ պէտք է լինի հայ գրագիտաց համար, բանի որ, հայ եկեղեցեաց մէջ կը հնչեն այն լեզուով գրուած փառաւոր ժամասացութիւնն եւ մեծավայելուշ շարականք»¹³։

Հ. Քերովիք Քուշներեանի գրական ժառանգութեան չուսումնասիրուած էջերից են նրա թարգմանութիւնները. ոռու պոեզիայի նրա գրաբարեան եւ արեւմտահայերէն թարգմանութիւնների ուսումնասիրութիւնը լուսաբանում է Քուշներեանի ստեղծագործական կարողութիւնների բոլորովին նոր եւ այսօր

¹¹ «Թագմավէպ», 1877-78, N 1, 4. Կե, էջ 137-145.

¹² Այս յօդուածը գրել է նա 1876 թուակնին, հետագայում՝ 1886թ., օգտագործել է որպէս իր առակների Բ հատորի առաջաբան։

¹³ Տե՛ս ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԻՔ Վ., Առակի ծաղկաբաղ եւ իմբնագիրք, Վենետիկ, Ս. Հազար, 1904, էջ 428.

էլ բաւականին արդիական մի ոլորտ: Բանաստեղծական նրա տաղանդի վկայութիւնն են յատկապէս Դաւթի սաղմուների մեկնութիւնները, որոնք լեզուի, ոճի, բառապաշարի, բառի զգացողութեան զարմանալի մի աշխարհ են բացում ընթերցողի առջեւ: Տարբեր տարիներին «Բագմավիպում» տպագրուած այս սաղմուները 1905 թուականին, յետմահու տպագրուում են մի առանձին գրքով¹⁴:

Որպէս թարգմանիչ Քուչներեանն ունէր թարգմանական իր որոշակի սկզբունքներն ու մօտեցումները, որոնք կիրաւուում էին թարգմանական աշխատանքի ընթացքում: Թարգմանական տեսակչտից նա ընդունելի էր համարում եւ՝ ազատ, եւ՝ «բառական» կամ բառային, եւ, ի հարկէ, «ըստ կարելոյն նիշտ քարգմանութիւնների»: Հարկ է նշել, որ Հ. Ք. Քուչներեանի թարգմանութիւնների մասին երբեք չի խօսուել եւ չի ուսումնասիրուել, մինչդեռ կարծում ենք, որ Պուչկինի, Լեմոնտովի բանաստեղծութիւնների յատկապէս գրաբարեան թարգմանութիւնների մասին խօսելիս Մ. Էմինի եւ Յ. Համազասպեանի թարգմանութիւնների կողքին պէտք է յիշատակուեն նաև Քուչներեանինը: Ժամանակագրական պարզ հաշուարկով իսկ, Քուչներեանը երրորդն էր նրանցից յետոյ, որ գրաբարով, հնչեցրեց Պուչկինին՝ յաղթահարելով թարգմանական որոշակի գժուարութիւններ՝ տաղաչափական, շարահիւսական, ոլիթմային, բառիմաստային եւ այլ բնոյթի: Եթէ Լազարեան ճեմարանի սան, հետագայում նշանաւոր հայագէտ Մ. Էմինի անուան հետ են կապում Պուչկինի պոեզիայի հայերէն առաջին թարգմանութիւնները¹⁵, որոնք «մի մեծ աւանդոյթի սկիզբ դարձան», իսկ Յ. Համազասպեանը¹⁶ շարունակեց նրա գործը, ապա Մխիթարեան վարժարանի սան Ք. Քուչներեանի թարգմանութիւնների մասին, որպէս գրական-պատ-

¹⁴ Տե՛ս ՔՈՒՅՆԵՐԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԻ Վ., Յարասութիւնն սաղմոսաց Դաւթի, Վենետիկի և Սուլը Ղազար, 1905, էջ 183:

¹⁵ Հստ ակադ. Էդ. Ջրբաշեանի, Մկրտիչ Էմինի թարգմանութիւնները կատարուել են 1834-1836թթ.: Նա գրաբար թարգմանել է Պուչկինի «Բախչիսարայի շատրուանը» եւ «Կովկասի գերին» պոեմները, որոնցից վերջինը չի պահպանուել:

¹⁶ Տե՛ս Ա. Ս. Պուչկինի պոեզիայից հայերէն առաջին թարգմանութիւնների մասին մանրամասն տե՛ս ԶՐԲԱԾԵԱՆ ԷԴ., «Պուչկինը եւ հայ բանաստեղծները», Ե., 1999, էջ 5-42:

մական փաստերի, ցաւօք, էդ. Զրբաշեանի «Պուշկինը եւ հայ բանաստեղծները» ուսումնասիրութեան մէջ չի յիշատակւում:

Թարգմանական առաջին դժուարութիւններից մէկը, որ պէտք է յաղթահարէր Քուշներեանը համարժէք տաղաչափութեան ընտրութիւնն էր: Ուսու պոեզիայի հայ թարգմանիչներից շատերը, սովորաբար, մերժում էին «բնագրի տաղաչափական սխեման ստրկօրէն վերարտադրելու փորձը» եւ ղեկավարում էին հայոց լեզուի հնարաւորութիւններով եւ առանձնայառկութիւններով¹⁷: Հ. Ք. Քուշներեանի առաջին թարգմանութիւններից է Պուշկինի "Брошу ли я вдоль улиц..." տողով սկսուող բանաստեղծութիւնը, որը տպագրուել է «Բազմավիճպում» 1876թ.: աւելի վաղ, քան Ա. Շատուրեանի եւ Յ. Ցովհաննիսեանի թարգմանութիւններն էին՝ տպագրուած բանաստեղծի ծննդեան 100-ամեակի առիթով (1899թ.), աւելի ուշ՝ 1905թ., «Բազմավիճպում» տպագրում է արեւմտահայերէն տարբերակը՝ Յովլէ. Պալեանի թարգմանութեամբ: «Իուսական հառոտնեայ յամբը,- գրում է էդ. Զրբաշեանը,- որով գրուած է այս բանաստեղծութիւնը հայերէն թարգմանութիւններում սովորաբար արտայայտում է կամ 8 վանկանի երկանդամ (4+4) կամ 10 վանկանի երկանդամ (5+5) տողաչափերով»¹⁸: Տեսնենք, թէ ինչպիսի տողաչափ, ինչպիսի որթմային եւ յանդային լուծումներ է ընտրել Քուշներեանն իր թարգմանութեան մէջ.

Գ. Քուշներեան

Брошу ли я вдоль улиц
шумных,
Вхожу ль во многолюдный
храм,
Сижу ль меж юношей безум-
ных,
Я предаюсь моим мечтам...¹⁹

Յորդամ շրբչիմ ի փողոցի բազ-
մաժխոր,
Կամ ի տանար ինչ ելանեմ
մարդաշատ,
Ի հանգանակ պատանեկաց ին-
լացնոր
Խորհուրդք մըտացս յուշ ինձ
ածեն անընդհատ...²⁰

¹⁷ Տե՛ս ԶԲԲԱՇԵԱՆ էԴ., Պուտիկայի հարցեր, 1976, էջ 257-264.

¹⁸ Տե՛ս ԶԲԲԱՇԵԱՆ էԴ., Պուշկինը և հայ բանաստեղծները, էջ 50-52.

¹⁹ Ա. Ա. Պուշկինի բանաստեղծութիւնները մէջբերուած են ըստ հետեւեալ հրատարակութեան, Ա. Ս. Պուշկին, Հոգու առաջնային աշխատանքները, 1985, էջ 455.

ինչպէս տեսնում ենք Քուշներեանն աւելացրել է վանկերի քանակը՝ բնագրի 8-9 վանկանի տողը թարգմանութեան մէջ դարձել է 11-12, ընդհանուր վանկերի քանակը քառատողում տատանում է, եթէ բնագրում կազմում է 34, ապա թարգմանութեան մէջ՝ 44 վանկ: Գնահատելով թարգմանութիւնը վստահութեամբ կարելի է ասել, որ թարգմանչին յաջողուել է հասնել համարժէքութեան, պահպանել բովանդակային ամբողջականութիւնը, հարազատ մնալ բնագրի բառապատկերային համակարգին, յանդաւորմանը (1-3, 2-4): Ինչ խօսք բանաստեղծական տողի երկարութիւնը փոքր-ինչ ծանրացրել է տողը, սակայն լիովին պահպանուել է բանաստեղծութեան խոհական-փիլիսոփայական խորութիւնը:

Պուշկինից Քուշներեանը թարգմանել է նաեւ «Յարասութիւն ի Հայր մեր» ("Օտպե հաա", (1882), «Բոշայք» (1886), «Թուչնիկ» (1886) բանաստեղծութիւնները:

Քուշներեանի թարգմանութիւնների մէջ յատկապէս առանձնանում է Պուշկինի "Օտպե հաա" բանաստեղծութեան թարգմանութիւնը: Այս բանաստեղծութիւնը գրուած է եղել Աննա Վոլֆի ալբոմում: Ի տարբերութիւն միւսների այն Պուշկինի ճեռագրով չէ, որը բազմաթիւ տարակարծութիւնների առկիթ է տուել: Մասնագէտները գտնում են, որ դա Պուշկինին է: Ակնյայտ է, որ 80-ական թուականներին այս բանաստեղծութեան չուրջ սկսուած բանավէճին ծանօթ է եղել Ք. Քուշներեանը, սակայն թարգմանել եւ տպագրել է «Բազմավէպում»: Որքան գեղեցիկ եւ բանաստեղծական է հնչում գրաբարեան թարգմանութիւնը («Յարասութիւն ի Հայր մեր»).

...Հայր մարդկութեան, Հայր երկնաւոր,
Քոյին անունդ անժամանակ
Սուրբ եղիցի առհասարակ.

Դու մեզ կացցես միշտ բագաւոր,
Կամք քո ի մեզ իւր եղիցի
Որպէս յերկինս նոյն եւ յերկրի...

²⁰ «Բազմավէպ», 1876, էջ 249-250.

Եւ վերջը՝

Հանդէպ խաչին
Զայս աղօթէր. լոյս կանքեղին

Տակաւ աղօտ նըսեմանայր,
Այլ սիրտ ծերոյն զըւարբանայր
Յաղօթից բանս կենդանարար:

1886 թուականին «Բազմավէպում» տպագրուում են Քուշներեանի Մ. Լերմոնտովի «Մարգարէ», «Աղօթք», 1904-ին յետմահու՝ «Ամպէր», «Առագաստ», «Հրեշտակ» բանաստեղծութիւնների թարգմանութիւնները, որոնք բոլորն էլ, թեմատիկ առումով պէտք է որ հոգեհարազատ լինէին նրան, պատասխանէին այն խոհափիլխոփայական հարցադրումներին, որոնց շուրջ մտորում էր հոգեւոր բարձրագոյն արժէքներով ապրող եւ ստեղծագործող մտաւորականը: Այս թարգմանութիւնները, կարծում ենք, դարձել են նրա հոգեւոր որոնումների, զգացմունքների իւրօրինակ հայելին: Լերմոնտովի աղատասիրական բանաստեղծութիւնները նոյնքան հոգեհարազատ են նրան, որքան եւ խոհական-փիլխոփայականը: «Մարգարէ» բանաստեղծութիւնը, որը Լերմոնտովի վերջին բանաստեղծութիւնն է, նրա ալբոմում գրանից յետոյ այլեւս ոտանաւորներ չկան, կարծես թէ շարունակում է Պուշկինի «Մարգարէ» բանաստեղծութեան թեման. պոետի խօսքը հասնելու է ժողովրդին, թէ նա քարկոծուելու է: Լերմոնտովն իր բանաստեղծութիւնը սկսում է այն տողից, որով վերջացնում է Պուշկինը՝ "С теч пор, как вечный судия // Мне дал всеведенье пророка...": Պուշկինի «Մարգարէից» (1826) տասնհինգ տարի յետոյ գրած իր բանաստեղծութեան մէջ Լերմոնտովը ելնում է պոետի եւ նրա գործի նոյնափակ ընկալումից եւ գնահատականից, պատմում այն հետապնդումների մասին, որոնց ենթարկում է բանաստեղծը:

Համեմատենք բնագրի եւ թարգմանութեան երկու տունը.

Завет предвечного храня,

Կամ աստ պատկառ ազդեցուքեանց
երկնաւոր

Мне тварь покорна там

Ինձ հըպատակ կան արածքըս երկ-

²¹ Մ. Եռլ. Լերմոնտովի բանաստեղծութիւնները մէջբերում են ըստ հետեւեալ հրատարակութեան. Մ. Յ. Լերմոնտով, *Собрание сочинений в четырех томах*, т. 1, М., 1975, § 126.

земная;
И звезды слушают меня,
Лучами радостно играя²¹.
նաւոր,
Ունկընդիք են խմոց խօսից աստեղց
պար,
Զուարքագին փայլատակեալ լուսա-
փառ:

Կամ՝

“Смотрите, вот пример для вас! ”
Он горд был, не ужился с нами,
Глупец хотел уверить нас,
Что бог гласит его устами!

Հայեցարուք, թող օրինակ լինի
ձեզ
Այրըդ խրոխտ, անմիաբան տայ
ընդ մեզ՝
Յինք համոզել նրգնէր, յիմար
սընապարծ,
Թէ ընդ շըրքուն իւր խօսիցի
ինքն Աստուած:

Ինչպէս տեսնում ենք Քուշներեանը բնագրի 8-9 վանկանի
տողը երկարացրել դարձրել է 11, որպէսզի կարողանայ տեղաւոր-
ութել եւ բովանդակային կորուստներ չունենալ: Գրաբարեան
թարգմանութիւնը պահպանում է Լերմոնտովի խօսքի ուժը, հա-
մեմատութիւնների պատկերաւորութիւնը, մակդիրների տեղին
եւ դիպուկ ընտրութիւնը:

Հ. Քուշներեանի արեւմտահայերէն թարգմանութիւնների
մէջ յատկապէս աչքի են ընկնում «Ամպեր» եւ «Առագաստ» բա-
նաստեղծութիւնները, որոնք իրենց խոհական եւ ազատասիրա-
կան տրամադրութիւններով պէտք է որ գրաէին նրա ուշադրու-
թիւնը: Եթէ, օրինակ, «Ամպեր» բանաստեղծութեան թարգմա-
նութեան մէջ Քուշներեանը գրեթէ նոյնութեամբ պահպանել է
բանաստեղծական չափը՝ բնագրի 12 վանկանի տողը թարգմա-
նութեան մէջ դարձել է 11, ապա «Առագաստ» բանաստեղծու-
թեան մէջ 8-9 վանկանի տողը դարձել է 11-12, որը որոշակի
փոփոխութիւններ է մտցրել թարգմանութեան մէջ:

Համեմատենք «Ամպեր» բանաստեղծութիւնից մի քառասոող,
համոզուելու համար, թէ որքան համահունչ է բնագրին, հարա-
գատ՝ ձեւային եւ բովանդակային, ինչպէս նաեւ բանաստեղծա-
կան չափանիշներով.

Տուчки небесные, вечные странники!
Степью лазурною, цепью жемчужною
Мчитесь вы, будто, как я же, изгнанники,
С милого севера в сторону южную.

Թարգմանուած է՝

Երկնից ամպեր, աստանդական միշտ շարժուն,
Ի դաշտ կապոյն, մարգարտայեռ շղթայով
Առաջ կ'երթայք, ախորականք ինձ հանգոյն
Դեպ ի հարաւ, սիրուն հիւսիս յետ բողելով:

Մինչդեռ «Առագաստ» բանաստեղծութեան մէջ թարգմանիչն ընդարձակել է տողը, խտացուել են բանաստեղծական պատկերները բառային յաւելումների պատճառով՝ փայլուն, մըռայլ, ծովակոծ, ի ծոց, անդադրում, ճկուն եւ այլ:

Համեմատենք բնագրի եւ թարգմանութեան 2 տունը.

Белеет парус одинокий
В тумане моря голубом!...
Что ищет он в стране далекой?
Что кинул он в краю родном?...

Играют волны – ветер свищет,
И мачта гнется и скрипит....
Увы,- он счаствия не ищет
И не от счаствия бежит!

Թարգմանուած է՝

Ճերմակ, փայլուն առագաստիկն միս մինակ
Կը ծածանի ծովուն ի մուայլ կապուտակ.
Ի՞նչ կը փնտրէ նա հեռուներ ծովակոծ
Ի՞նչ է բողել նա հայրենի տանն ի ծոց:

Խաղան ալիք եւ սուլէ հոդմն անդադրում
Խոնարհելով վայր նարճատի կայմն ճկուն:
Ոչ, ո՛չ իրեն նա չի փնտուել մի նոր բաղդ,
Եւ չի խուսել բաղդէն հեռու տարապարտ:

Քուշներեանն ընտրելով թարգմանութեան ազատ ձեւը, պահպանելով հիմնականում իմաստային, ոիթմային-հնչերանդային համարժէքութիւնը նախ եւ առաջ յանգաւորման շնորհիւ (ե-

թէ բնագրում յանդաւորուած են 1-3, 2-4, ապա թարգմանութեան մէջ 1-2, 3-4 տողերը) հասել է բովանդակային-իմաստային համարժէքութեան: Կարծում ենք, որ այս թարգմանութիւնը պէտք է համարել կայացած՝ «Առաջաստ» բանաստեղծութեան հայերէն միւս թարգմանական տարբերակների շարքում:

1878 թուականին «Բազմավիճպում» տպագրուում է Նեկրասովի «Առ սերմնահանս» ("Сиятелия") բանստեղծութիւնը Հ. Ք. Քուչներեանի թարգմանութեամբ, որն առաջին անգամ տպագրուել է "Отечественные записки" ամսագրում 1877 թուականին (N 1), մէկ տարի անց այն թարգմանուում եւ տպագրուում է նաեւ հայերէն: Վստահութեամբ կարելի է ասել, որ Նեկրասովի անհատականութիւնը, նրա պոեզիան ոչ միայն խորապէս ընդունւում եւ ընկալւում էին Քուչներեանի կողմից, այլեւ նա ձգտում էր հայ ընթերցողին ներկայացնել իր ժամանակակցին: Բանաստեղծութեան շատ հարցադրումներ հոգեհարազատ էին նրան.

Сеятель знанья на ниву народную!
Почву ты, что ли находишь бесплодную..
Худы ли твои семена?

Робок ль сердцем ты? слаб ли ты силами?
Труд награждается всходами хильыми,
Доброго мало зерна!

Նեկրասովը հաւատացած է, որ պէտք է ցանել՝

Сейте разумное, доброе, вечное,
Сейте! Спасибо вам скажет сердечное
Русский народ...²².

Տաղաչափական տեսակէտից բաւականին դժուարութիւն ներկայացնող այս ոտանաւորը, որի տասներեք տողերը ունեն 12, 7, 4 վանկանի չափեր, ոճական առումով ներկայացնում է հարցական, բացականչական եւ պատմողական նախադասութիւնների յաջորդականութիւն, Քուչներեանի թարգմանութեան մէջ այն դարձել է 16 տողից բաղկացած ոտանաւոր, որի բոլոր տողերը

²² Տե՛ս Ն. Նեկրասովի բանաստեղծութիւնները մէջբերում են ըստ հետեւեալ հրատարակութեան՝ Հ. Ա. Նեկрасов, Собрание сочинений в трех томах, տ. 2, էջ 320:

ունեն հաւասար՝ 7 վանկից բաղկացած տողաչափեր։ Բացի այդ, եթէ բնագրում իւրաքանչիւր երրորդ տողը (1, 2, (3) եւ 4, 5, (6)) կարճ է՝ 45 վանկ եւ միւս տողերի հետ յանգաւորուած չէ, ապա հայերէն թարգմանութեան մէջ դրանք բոլորը յանգաւորուած եւ ոիթմաւորուած են։ Զնայած տողը կարճացնելու պատճառով որոշ բառիմաստային նրբերանգներ կորել են, սակայն ընդհանուր առմամբ Քուշներեանին յաջողուել է պահպանել Նեկրասովի բանաստեղծութեան գաղափարական ամբողջականութիւնը, պատկերայնութիւնը, ոճական առանձին նրբերանգներ.

Դու սերմանող գիտութեանց
Յագարակի հայրենեաց.
Երկի՞րն արդեօֆ է վատրար,
Թէ քո սերմանք իցեն չար.
Երկմիտ արդեօֆ ես հոգւով,
Կամ պակասէ՞ քեզ կորով...

Վերջին եռատողը՝ մէկ կարճ տողով (4 վանկ) թարգմանութեան մէջ դարձել է քառատող՝ միաժամանակ հաղորդելով պոետի հիմնական մտորումներն ու զգացմունքները.

Սերմանեցէք զսերմ բարի
Զյաւերժական ըզմըսացի.
Շնո՞րի մեծ՝ երկոցդ, ասասցէ
Ազգըս Ռուսաց ի սըրտէ:

1876թ. Նեկրասովը ծանր հիւանդանում է, մահուանից առաջ կրած տառապանքներն արտացոլուեցին նրա "Պօւեդնիւ ու ուսիւնականութիւնների շարքում։ Նեկրասովի բանաստեղծութիւնների կարեւորագոյն առանձնայատկութիւններից մէկը, որն առկայ է նաեւ նրա վերջին բանաստեղծութիւնները, անձնականի եւ քաղաքացիականի միջեւ եղած որեւէ սահմանի բացակայութիւնն է, քաղաքացիականը, հասարակականը ընկալւում եւ վերապրում է որպէս անձնական։ Այս տեսակէտից, կարծում ենք, որ Հ. Քուշներեանի կողմից այս բանաստեղծութեան ընտրութիւնը եւս պատահական չէ, դա նաեւ սեփական կեանքի, ողբերգութեան եւ տառապանքի միջով անցած զգացում է, որը հայերէն գրաբարը հնչում է բնագրին համարժէք նոյնպիսի ուժով եւ պաթոսով։

Համեմատենք բնագրիրը եւ թարգմանութիւնը.

Вступление

Нет! не поможет мне аптека,
 Ни мудрость опытных врачей,
 Зачем же мучить человека?
 О небо! смерть пошли скорей!
 Арузья притворно безмятежны,
 Угрюм мой верный черный пес,
 Глаза жены сурово-нежны,
 Сейчас я пытку перенес.
 Пока недуг молчит, не гложет
 Я тешусь странною мечтой.
 Что потолок спуститься может
 На грудь могильною плитой.

Սկիզբն վերջին երգոց

Ոչ, չօգնէ ինձ ոչ դեղատունն,
 Ոչ թթշկաց փորձ կըմսութիւն.
 Առ ինչ կըտտանե՞րս այս իցեն.
 Երկինք, տուր ինձ ըզմահ այժմէն:
 Շուրջ բարեկամիս, դիմք անպատիր,
 Հաւատարիմ շունս վրշտակիր,
 Աչք կողակիցս լուրջ նագենի...
 Գիտցէք, զինչ ընդ միտու յածի:
 Մինչ դեռ ցաւք իմ լրուն առ վայր՝
 Ցնորք գան ինձ ի մըխիք-ար.
 Թուրիմ տանիքս վայր իշանեն
 Շածկել զիս աստ, զինչ խաչավէմ:

Ուշագրաւ է, որ Քուշներեանը բնագրի 8-9 վանկանի տողը բաղկացած տողերը թարգմանել է Հիմնականում Հաւասար, նոյն 8-9 վանկաչափով, որով կարողացել է ստեղծել բնագրի եւ թարգմանութեան տաղաչափական համարժէքութիւն, ինչպէս նաև կառուցուածքային ամբողջականութիւն: Առանձին դէպքերում թարգմանուած չեն խորհրդանշական արժէք ունեցող գունային էպիտետներ: Օրինակ՝ շերին պէս սեւը թարգմանուած չէ, մինչդեռ այն որոշակի հոգեբանական, տրամադրութիւն ստեղծող նշանակութիւն ունի: Կամ՝ "глаза жены сурово-нежны" թարգմանուած է լուրջնազենի, սակայն, կարծում ենք, դիմանկարային այս մանրամասը, իմաստային որոշակի ծանրաբեռնուածութիւն ունի եւ բանաստեղծը յատկապէս ցանկացել է ընդգծել, կնոջ աչքերի խիստ, զսպուած, միաժամանակ քնքուշ արտայայտութիւնը:

Զանդրադառնալով Հ. Ք. Քուշներեանի կոիլովի առակների թարգմանութեանը, որն առանձին ուսումնասիրութեան նիւթէ²³, կարող ենք վստահութեամբ ասել, որ «Բազմավիշպում» (սկսած 1844թ.) տարբեր տարիներին տպագրուած նրա՝ կոիլովի առակների թարգմանութիւնները կատարուած են առակի ժանրային առանձնայատկութիւնների, ժողովրդախօսակցական լեզուի, դարձուածքների, առածների եւ ասացուածքների, իսութիւն պատկերաւորման միջոցների, ուսւասկան ազգային բներանգի պահ-

²³ Մանրամասն տես ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԵԿ Վ., Առակի ծաղկաբաղբակի և ինքնագիրք, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1904, 639 էջ:

պանմամբ: Դրանք այսօր էլ չեն կորցրել իրենց գեղարուեստական արժէքը:

Ռուս դասական գրականութեանը նուիրուած Հ. Ք. Վ. Քուշներեանի յօդուածների ու թարգմանութիւնների ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն տուեց ոչ միայն մէկ դար յետոյ արժէքաւորելու նրա գրական գործունէութիւնը, լրացնելու մտաւորականի նրա դիմանկարը, այլեւ գրական-պատմական նոր փաստերով հարստացնելու հայուսական գրական առնչութիւնների պատմութիւնը, այդ պատմութեան չգրուած էջերում աւելացնելու Մխիթարեան միաբանութեան բազմաշնորհ սաներից մէկի՝ Հ. Ք. Վ. Քուշներեանի անունը:

ՌՈՒԶԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

The Honored Descendant of the Mekhitarist Congregation

ROUSAN TER-GRIGORYAN

(summary)

The paper presents the literary portrait of the alumnus of Mekhitarist College H. K.V. Kushneryan (1841-1891) with respect to his twenty-year contribution to Revue Bazmavep in particular.

Kushneryan's papers on Russian classical literature (I. Krilov, A. Pushkin, M. Lermontov, N. Nekrassov, I. Turgenev and others), as well as a comprehensive study of his translations (Grabar - Old Armenian and Ashkharabar - New Armenian) not only offer an opportunity to reveal a unique area of Bazmavep's diverse and beneficial activities but also enrich the history of Armenian-Russian literary links with a new name by opening the unknown pages in the biography of the outstanding Armenian intellectual.